

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ  
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

**Անահիտ Պետրոսյան  
ՄՄՀ  
Արցախ**

**Անոտացիա:** Կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման գործում մեծ դերակատարում ունեն ֆինանսական արդյունքների հաշվառման և վերլուծության մեթոդաբանության սկզբունքները: Հաշվապահական հաշվառման առանցքային խնդիրներից մեկը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների մասին տեղեկատվության ձևավորումն ու դրա վերլուծությունն է: ԱՀ կազմակերպություններում եկամուտների ստացման և ծախսերի կատարման վրա անհրաժեշտ է իրականացնել համալիր վերահսկողություն՝ բացահայտելով ոչ միայն շահույթի աճի ռեզերվները, այլև շուկայում մրցակցային դիրքերի ապահովման ուղիները:

**Բանալի բառեր՝** ֆինանսական գործակիցներ, իրավիճակային վերլուծություն, գործոնային վերլուծություն, կառավարչական հաշվառում, ֆինանսական հաշվառում:

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներում կարևոր տեղ է հատկացվում կազմակերպությունների եկամուտների և ծախսերի ցուցանիշների ճանաչման հարցերին, որը հնարավորություն է ընձեռում վերահսկողություն սահմանելու եկամուտների և ծախսերի ձևավորման գործընթացի վրա, ինչպես նաև բացահայտելու այդ ցուցանիշների փոփոխության վրա ազդող գործոնները: Կազմակերպությունների ֆինանսական արդյունքների ճանաչման մոտեցումների մեկնաբանման արդյունավետ ուղի է համարվում նաև ֆինանսական հաշվառման քաղաքականության մշակումն ու ներկայացումը: Ֆինանսական հաշվառման քաղաքականությունն որոշակի սկզբունքներ, հիմունքներ, եղանակներ, կանոններ, ձևեր և արարողակարգեր է ներկայացնում, որոնք կիրառվում են կազմակերպության կողմից ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և ներկայացնելու նպատակով:

Ելնելով վերոնշյալից, կարծում ենք, որ ԱՀ կազմակերպությունները պետք է հստակ առաջնորդվեն ֆինանսական արդյունքների հաշվառման հաշվապահական միջազգային ստանդարտների մոտեցումներով և այդ մասով կազմեն հաշվապահական հաշվառման քաղաքականություն: Այլ խնդիր է, թե նպատակահարմար է արդյո՞ք փոքր և գերփոքր կազմակերպություններում մշակել և ներկայացնել ֆինանսական արդյունքների կառավարչական հաշվառման քաղաքականություն:


Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԱՀ կազմակերպությունների մեծ մասում բացակայում է կառավարչական հաշվառումը, իսկ ինչ վերաբերում է կառավարչական հաշվառման քաղաքականությանը, ապա այն ընդհանրապես չի մշակվում՝ անգամ այն կազմակերպություններում, որտեղ կիրառվում են վերոնշյալ հաշվառման համակարգեր: Դրան զուգահեռ, դեռևս մասնագիտական գրականության մեջ նույնպես համընդհանուր մոտեցում չի ցուցաբերվում ինչպես կառավարչական հաշվառման քաղաքականության սահմանման, այնպես էլ նման քաղաքականության կիրառման նպատակահարմարության ուղղությամբ [2, էջ 443-444]:


ԱՀ կազմակերպություններում ֆինանսական արդյունքների հաշվապահական հաշվառման քաղաքականությանը պետք է տարբերակված մոտեցումներ ցուցաբերել՝ ելնելով դրանց չափերից և հասույթի ստացման ծավալներից: Այսպես, եթե եկամուտների և ծախսերի ֆինանսական հաշվառման քաղաքականության մշակումն ու ներկայացումը պարտադիր է բոլոր կազմակերպությունների համար, ապա ֆինանսական արդյունքների կառավարչական հաշվառման քաղաքականության մշակումը նպատակահարմար չի համարվում ԱՀ գերփոքր և փոքր կազմակերպություններում, որոնք չնայած իրենց տեսակարար կշռով գերազանցում են խոշոր ձեռնարկություններին (գործող կազմակերպությունների 57,4%-ը գերփոքր են, իսկ 29,9%-ը՝ փոքր), սակայն հասույթի ստացման ծավալներով ետ են մնում վերջիններից [1]:

Հետևաբար, ֆինանսական արդյունքների հաշվառման և վերլուծության մեթոդաբանության՝ մեր կողմից առաջարկվող սխեմայում տարբերակված մոտեցում է ցուցաբերվում ԱՀ խոշոր և փոքր ձեռնարկությունների միջև (տես գծապատկեր 1): Գերփոքր և փոքր կազմակերպություններում կառավարչական հաշվառման քաղաքականության ներկայացումը ոչ միայն հիմնախնդիր է աշխատատարության և մասնագետների բացակայության պատճառով, այլև տնտեսապես նպատակահարմար չէ մարտավարական և ռազմավարական որոշումների արդյունավետության և բարդության տեսանկյունից:

ԱՀ կազմակերպություններում ֆինանսական արդյունքների վերլուծության մեթոդաբանությունը նույնպես վերանայման կարիք ունի: Գերփոքր և փոքր կազմակերպություններում, որպես կանոն, վերլուծություն չի իրականացվում, այլ ընդամենը դրանք սահմանափակվում են շահույթի ձևավորման գործընթացով վերահսկողական գործառնություններով, իսկ խոշոր կազմակերպություններում կատարվում են ֆինանսական արդյունքների իրավիճակային գնահատումներ՝ օգտագործելով հարաբերական ցուցանիշներ (ֆինանսական գործակիցներ):

Սակայն, շուկայական տնտեսության մրցակցային պայմաններում կարևորվում են ոչ միայն կազմակերպություններում ֆինանսական արդյունքների ձևավորման վերահսկողության մարտավարության ոլորտի որոշումները, այլև ռազմավարական նշանակության գնահատումները, որը մեր կարծիքով, անհրաժեշտ է հաշվի առնել ԱՀ կազմակերպություններում կիրառվող տնտեսական գործունեության վերլուծության մեթոդաբանությունում: Այսպես, եթե իրավիճակային վերլուծության ընթացքում ֆինանսական արդյունքների ձևավորման վերաբերյալ մարտավարական բնույթի եզրահանգումներ են կատարվում՝ գնահատելով կազմակերպությունների իրացվելիության, տնտեսական գործունեության ակտիվության ցուցանիշները, ապա գործարարության հեռահար թիրախները վերլուծելիս դիտարկումների ոլորտ է ընդգրկվում գաղափարների գեներացիան, տնտեսավարման տարբեր ոլորտների շուկաներում մրցունակության դիրքավորումը, ռիսկերի կանխարգելումը:





Գծապատկեր 1. ԱՀ կազմակերպություններում ֆինանսական արդյունքների հաշվառման և վերլուծության մեթոդաբանության առաջարկվող սխեման

Հետևաբար, եթե ԱՀ ում գործող բոլոր կազմակերպություններում ֆինանսական արդյունքների ձևավորման հրավիճակային վերլուծության կիրառումը տեղին է, ապա տնտեսական գործունեության արդյունքների ռազմավարական չափումներն ու գնահատումները անարդյունավետ է գերփոքր և փոքր կազմակերպություններում, որոնք, որոպես կանոն, կայուն զարգացման առումով շուկայում մրցակցային լուրջ մարտահրավերների առջև կանգնած չեն:

Մյուս կողմից, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԱՀ խոշոր կազմակերպություններում չեն կիրառվում ֆինանսական արդյունքների թիրախային հեռահար գնահատումներ՝ ուղղված ֆինանսական հոսքերի կանխատեսումներին, հասույթի և ծախսերի ձևավորման ռիսկային գործոնների գնահատումներին և կանխարգելիչ գործառնություններին: Ուստի գտնում ենք, որ եթե ոչ գերփոքր կամ փոքր կազմակերպություններում, ապա միջին և խոշոր ձեռնարկություններում անհրաժեշտ են ֆինանսական արդյունքների վերլուծության մեթոդաբանական լրացումներ՝ ուղղված, ուղղորդված գործարարության հեռահար նպատակներին և մրցունակության բարձրացման ռազմավարության բարձրացմանը:

Այսպիսով, ԱՀ կազմակերպություններում ֆինանսական արդյունքների հաշվառման և վերլուծության մեթոդաբանության առաջարկվող սխեմայում (տես գծապատկեր 1) տնտեսական վերլուծության ավանդական մոտեցումներին զուգահեռ, նախանշվում են տնտեսավարման առաջընթացը ապահովող ուղղությունները և դրանց քանակական չափման մոտեցումները: Ընդ որում, ռազմավարական գնահատման առաջարկվող առանցքային ցուցանիշներ են առաջարկվում կազմակերպության մրցունակությունը, կապիտալի հատույցը, գաղափարների գեներացիայից ստացվող արդյունքները, որոնք բնութագրում են գործարարության թիրախային ուղղություններին հասանելիությունը և համարվում են առաջընթացը գնահատող տեղեկատվական կրիչներ: Նման ցուցանիշների ընդգրկումը ֆինանսական արդյունքների հաշվառման և վերլուծության համակարգ հնարավորություն է ընձեռնում նաև վերլուծելու գործարարության արդյունքների

ուղղորդվածության բնույթն ու առնչվելիությունը ընդունված ռազմավարական ծրագրերին:

ԱՀ կազմակերպություններում ֆինանսական արդյունքների հաշվառման և վերլուծության մեթոդաբանության առաջարկվող սխեմայում, ռազմավարական գնահատումներին զուգահեռ, կիրառության մեջ են դրվում նաև գործարարության սուբյեկտների տնտեսվարման կայունությունը բնութագրող ցուցանիշներ, որոնք կիրառվում են գործարարության ֆինանսական վիճակի և ակտիվության աստիճանի ախտորոշման ժամանակ: Դրա նպատակը, գործարարության առջև ծառայած ընթացիկ այնպիսի խնդիրների լուծումներն են, ինչպիսիք են ակտիվների օգտագործման արդյունավետությունը, կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների մարման գնահատումը, վճարունակության աստիճանի որոշումը, շահութաբերության վերլուծությունը, ծախսային հոսքերի կառավարումը, դեբիտորական պարտքերի հավաքագրելիության աստիճանը:

Այսպիսով, ֆինանսական արդյունքների վերլուծության մեթոդաբանության շրջանակում անհրաժեշտություն է առաջանում իրականացնելու ռազմավարական և իրավիճակային գնահատում այնպես, որ հնարավորություն ստեղծվի հասույթի և ծախսային հոսքերի ռազմավարական և մարտավարական կառավարման արդյունքային ցուցանիշների ինտեգրման համար (տես գծապատկեր 1): Դրանով լուծվում են գործարարության արդյունքների ռազմավարական և իրավիճակային ցուցանիշների ինտեգրման խնդիրներ: Ընդ որում, եթե իրավիճակային (դիագնոստիկ) ցուցանիշները հաշվապահական հաշվառման համակարգում կիրառման պատմություն ունեն և ավանդաբար հանդես են գալիս ֆինանսական գործակիցների տեսքով [3, էջ 6], ապա դեռևս իրենց գործնական կիրառումը չեն ստացել ռազմավարական նպատակներին ֆինանսական արդյունքների հասցեագրված ցուցանիշների թե մշակումը, և թե ներդրումը կազմակերպությունների տնտեսական գործունեության ոլորտում:

Իրավիճակային վերլուծության առավել ցայտուն առավելություններից է համարվում կիրառման պարզությունը և ֆինանսական դաշտում լայնամասշտաբ համեմատությունների անցկացումը: Կիրառելով ստանդարտ ֆինանսական գործակիցներ, որոնք հեշտ հաշվարկելի են, անմիջապես հնարավորություն է ստեղծվում համեմատություններ կատարելու ոչ միայն սահմանված նորմատիվային մեծությունների, այլև մրցակից կազմակերպությունների ֆինանսական գործակիցների հետ և դրանով իսկ, ախտորոշելու վերլուծվող կազմակերպության ֆինանսական կայունության սպառնալիքները և մրցակցային դիրքերը [4, էջ 73]:

Սակայն, ստանդարտ ֆինանսական գործակիցներն ու դրանց նորմատիվային մեծությունները, որպես վերլուծության գործիքներ, ունեն որոշակի թերություններ: Այսպես, շուկայում կազմակերպությունների մրցակցային դիրքերի վերաբաշխումը ստիպում են պարբերաբար վերանայելու սահմանված նորմատիվները, և ստացվում է այնպես, որ մի քանի տարվա կտրվածքով հաշվարկված գործակիցները անհամադրելի են դառնում անփոփոխ մնացած միևնույն նորմատիվային մեծության հետ: Բացի այդ, ֆինանսական գործակիցների գծով սահմանված նորմատիվներն էապես տատանվում են գործարարության տարբեր ոլորտներում, կապված ռեսուրսների ձեռքբերման, շուկայում մրցակցային պայմանների, դրամական հոսքերի կառավարման առանձնահատկությունների հետ: Այս առումով մասնագիտական գրականությունում կարծիք է հայտնվում, որ միշտ չէ հնարավոր տարբեր ճյուղերում գործող կազմակերպությունների ֆինանսական գործակիցների համեմատումները համարել տնտեսագիտորեն հիմնավոր [5, էջ 133-135]:

Փաստարկներ են բերվում ի օգուտ կազմակերպությունների ֆինանսական դրության գործոնային վերլուծության, այն առումով, որ ֆինանսական գործակիցներն ախտորոշում են իրավիճակը և արձանագրում թե «ինչ է եղել», սակայն չեն բացահայտում այն հանգամանքերը, թե «ինչու է եղել», որը չափազանց կարևոր է կառավարչական որոշումների իրականացման համար: Բացի այդ, հաճախ իրավիճակային վերլուծության արդյունքներով դժվարանում է ընդհանուր գնահատական տալ կազմակերպության ֆինանսական դրության վերաբերյալ, քանի որ մի խումբ գործակիցների գծով կարող են ձևավորվել դրական արդյունքներ (օրինակ հաշվեկշռի իրացվելիություն), իսկ մեկ այլ խումբ գործակիցներ միաժամանակ կարող են ներկայացնել ֆինանսական կայունության թուլացման արդյունքներ (օրինակ ինքնավարություն, շահութաբերություն և այլն):

ԱՀ կազմակերպություններում ֆինանսական արդյունքների հաշվառման և վերլուծության ուղղությամբ մեր կողմից առաջարկվող հայեցակարգային նոր մոտեցումները (տես գծապատկեր 1),

հնարավորությունն է տալիս մի կողմից բարելավելու հասույթի և ծախսային հոսքերի տեղեկատվական ապահովվածությունը, մյուս կողմից նախապայմաններ են ստեղծում արդյունավետ կառավարչական որոշումների իրականացման համար:

Նախ, ֆինանսական արդյունքների հաշվառման ու վերլուծության տեղեկատվական ապահովվածության գործիքակազմն է ընդլայնվում, նրանում ավանդական հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների ու ֆինանսական հաշվառման քաղաքականությունից բացի՝ նաև կառավարչական հաշվառման քաղաքականության ընդգրկումով: Նման իրավիճակում ԱՀ միջին և խոշոր կազմակերպությունները, որոնք ապահովում են հանրապետությունում գործարարության հասույթի երեք քառորդից ավելին, կստանան առավել ընդգրկուն տեղեկատվություն եկամտային և ծախսային հոսքերի ոչ միայն փաստացի, այլև կանխատեսվող հոսքերի վերաբերյալ, հաշվի առած ձեռնարկատիրության ռիսկային գործոնները, մրցակցային առավելություններն ու թերությունները: Եվ վերջապես, ֆինանսական արդյունքների վերլուծության մեթոդաբանական նոր մոտեցումները՝ գործոնային և իրավիճակային գնահատումների համակցումով, հնարավորություն կստեղծեն մակրոտնտեսական համեմատաբար փակ շղթայի պայմաններում գործող ԱՀ կազմակերպություններում արդյունավետ կառավարչական որոշումներ կայացնել այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են:

- արտաքին ներդրումների սակավության պայմաններում կազմակերպությունների գործունեությունից ակնկալվող ֆինանսական արդյունքների ձևավորման օպտիմալացումը,
- տնտեսական մեկուսացման պայմաններում հայտնված տնտեսվարող սուբյեկտների կողմից կայուն զարգացման հեռահար թիրախներին միտված շահույթի հիմնավոր օգտագործումը,
- պասիվ արտաքին ապրանքաշրջանառության պայմաններում, ներտնտեսական ներքին շղթայով կազմակերպությունների արտադրանքի կամ մատուցվող ծառայությունների իրացման ներդաշնակեցման ապահովումը:

Թվարկած հիմնախնդիրների լուծման նպատակով մեր կողմից առաջարկվում է ֆինանսական արդյունքների գնահատման պարագայում փոխկապակցել իրավիճակային և գործոնային վերլուծության գործիքները, հաշվի առնելով մի շարք մոտեցումներ:

Առաջին, ֆինանսական գործակիցների համակազմը անհրաժեշտ է ներկայացնել ոչ թե տարանջատված, այլ փոխկապակցված և համակարգված բիզնես ռիսկերի, ֆինանսական դրության կայունության սահմանափակ ռեսուրսների, դրամական հոսքերի թույլատրելի շրջանակների հետ: Նման համակարգումը հնարավորություն կտա ոչ միայն ձևավորելու ֆինանսական արդյունքների շրջանակը՝ ի նպաստ ֆինանսական կայունության ապահովմանը, այլև հաշվի առնելու գործարարության ակտիվության շահերը՝ ծախսային և եկամտային հոսքերի նախընտրելի շրջանակները սահմանելիս:

Երկրորդ, ֆինանսական արդյունքների վերլուծության մեթոդաբանությունն անհրաժեշտ է կառուցել հակակշռող համակարգի հենքով, հնարավորինս համալիր կարգով հաշվի առնելով տնտեսական գործունեության միմյանց հակազդող բազմաբնույթ գործոններ և դրանց առնչվող սահմանափակումներ: Կազմակերպությունների շահույթի աճի կամ նվազման ցանկացած շարժառիթը պետք է զուգակցվի դրան հակասող մեկ այլ գործոնի ներգրավմամբ, որպեսզի սահմանվեն հակակշիռներ՝ ի նպաստ կազմակերպության գործարարության տարբեր ասպեկտների հարմոնիզացմանը:

Երրորդ, ֆինանսական արդյունքների հաշվառման և վերլուծության կիրառվող մեթոդաբանությունում եկամուտների ու ծախսերի ձևավորման շրջանակին ներկայացվող գնահատման համակարգը պետք է լինի բաց, որպեսզի ապահովվի ճկունություն շուկայի մրցակցային պայմանների փոփոխման արագ արձագանքման նկատմամբ: Բաց համակարգը անհրաժեշտ է կառուցել այնպես, որ գործարարության միջավայրի փոփոխման պարագայում արագորեն փոփոխման ենթակվի թե նրանում ընդգրկված սահմանափակող գործոնների համակազմը, և թե ֆինանսական կայունության ներուժը ապահովող սահմանների շրջանակը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԱՀ ԱՎԾ պաշտոնական կայք, [www.stat-nkr.am](http://www.stat-nkr.am)
2. Մանուկյան Տ., Արտադրական կազմակերպությունների ֆինանսական դրույթյան վատթարացման պատճառների համակարգման հիմնական մոտեցումները, ՀՊՏՀ 23-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., 2013.
3. Варушина М.А. Учетная политика для целей управленческого учета, //Бухгалтерский учет, 2007, #23.
4. Кузьмина М.С. Формирование управленческой учетной политики /М.С. Кузьмина // Бухгалтерский учет. 2007, № 4.
5. Juguryan A, Khachatryan N., Managerial accounting issues in agricultural holdings, Agrarian [http://www.anau.am/images/stories/journal/4\\_2013/4.2013\\_Eco.pdf](http://www.anau.am/images/stories/journal/4_2013/4.2013_Eco.pdf)

### РЕЗЮМЕ

#### **Методические проблемы учета и анализа финансовых результатов в организациях Арцаха Анаит Петросян**

**Ключевые слова:** финансовые коэффициенты, ситуационный анализ, факторный анализ, управленческий учет, финансовый учет.

Методологические принципы учета и анализа финансовых результатов имеют большую роль в повышении эффективности хозяйственной деятельности предприятий. Одним из ключевых вопросов бухгалтерского учета выступает информационное обеспечение и анализ финансово-экономических результатов отчетного периода предприятий. В статье рассматриваются проблемы комплексного контроля над формированием доходов и расходов предприятий Арцаха, с целью выявления не только резервов роста прибыли, но и путей обеспечения конкурентных позиций в рыночной среде.

### SUMMARY

#### **Methodological issues of Accounting and Analysis of Financial Results in the organizations of Anahit Petrosyan**

**Key words:** financial coefficients, situational analysis, factor analysis, management accounting, financial accounting.

Methodological principles of accounting and analysis of financial results are of great importance in increasing the efficiency of economic activity of enterprises. One of the key issues of accounting is information support and analysis of financial and economic results of the reporting period of enterprises. The article examines the problems of complex control over the formation of incomes and expenditures of Artsakh enterprises, not only to identify the growth of profit reserves, but also ways to ensure competitive positions in market environment.